

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ
2007/60/ԵՀ հրահանգ**

Հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 288, 06.11.2007թ. էջեր 0027 - 0034

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ
2007/60/ԵՀ հրահանգ**

Հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],

Քանի որ

- 1) հեղեղումները մահացություն առաջացնելու, մարդկանց տարհանելու, շրջակա միջավայրը վնասելու, տնտեսական զարգացմանը խոչընդոտելու և Համայնքի տնտեսական գործունեությունը լրջորեն խաթարելու հավանականություն ունեն,
- 2) հեղեղումները բնական երևույթներ են, որոնց հնարավոր չէ կանխել: Այնուամենայնիվ, մարդկային գործունեության որոշ տեսակներ (ինչպիսիք ողողադաշտերում բնակավայրերի և տնտեսական գործունեության տեսակների ավելացումն են, ինչպես նաև հողօգտագործման հետևանքով ջրի բնական պահուստի նվազեցումը), ինչպես նաև եղանակային փոփոխությունները նպաստում են հեղեղումների բացասական ազդեցությունների հավանականության ավելացմանը,
- 3) հնարավոր և ցանկալի է նվազեցնել հատկապես մարդկային առողջությանը և կյանքին, շրջակա միջավայրին, մշակութային ժառանգությանը, տնտեսական գործունեությանն ու ենթակառուցվածքներին սպառնացող հեղեղումների բացասական հետևանքների ռիսկը: Այնուամենայնիվ, արդյունավետ լինելու համար, այդ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները գետի ավազաններում պետք է հնարավորինս համակարգված լինեն,
- 4) Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգով էկոլոգիական և քիմիական լավ կարգավիճակի համար յուրաքանչյուր գետի ավազանի տարածքի համար պահանջվում է մշակել գետավազանային կառավարման առանձին ծրագրեր, որոնք կնպաստեն հեղեղումների հետևանքների մեղմացմանը: Այնուամենայնիվ, հեղեղումների ռիսկի նվազեցումը նշված Հրահանգի գլխավոր նպատակներից չէ, և դրանում հաշվի չեն առնվում հեղեղումների ռիսկի ապագա փոփոխությունները՝ կապված եղանակային փոփոխության հետ,
- 5) հեղեղումների ռիսկի կառավարման՝ հեղեղումների կանխման, մեղմման և դրանցից պաշտպանության մասին Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական ու Տարածաշրջանային կոմիտեներին

ուղղված՝ Հանձնաժողովի 2004 թվականի հուլիսի 12-ի հաղորդագրության մեջ ներկայացված է Համայնքի մակարդակով հեղեղումների ռիսկերի կառավարման վերաբերյալ մոտեցումներն ու վերլուծությունը, ինչպես նաև նշված է, որ Համայնքի մակարդակով համաձայնեցված և համակարգված գործողությունը կհանգեցնի արժեքի զգալի ավելացմանը և կբարելավի հեղեղումներից պաշտպանության ընդհանուր մակարդակը,

- 6) հեղեղման արդյունավետ կանխարգելման ու մեղմացման համար, բացի անդամ պետությունների համակարգված գործունեությունից, պահանջվում է նաև երրորդ երկրների հետ համագործակցություն: Այն համապատասխանում է 2000/60/ ԵՀ հրահանգին ու հեղեղումների ռիսկի կառավարման միջազգային սկզբունքներին, ինչպես նաև նշվում է Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության ու օգտագործման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայում, որը հաստատվել է Խորհրդի թիվ 95/308/ԵՀ [4] որոշմամբ, և դրանից բխող այլ համաձայնագրերում,
- 7) քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին աջակցելու նպատակով Համայնքի համագործակցության մեխանիզմ ստեղծելու մասին [5] Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2001/792 (ԵՀ, Եվրատոմ) որոշումը խոշոր աղետների, այդ թվում նաև հեղեղումների դեպքում մոբիլիզացնում է անդամ պետությունների աջակցությունն ու օժանդակությունը: Քաղաքացիական պաշտպանությամբ կարող է բավարար արձագանք ապահովվել վնաս կրած բնակչության համար՝ բարելավվելով նրանց պատրաստվածությունն ու ճկունությունը,
- 8) Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 2012/2002 կանոնակարգով (ԵՀ) հիմնադրված Եվրոպական միության համերաշխության հիմնադրամը մեծ աղետի դեպքում կարող է շտապ ֆինանսական աջակցություն տրամադրել՝ օգնելու համապատասխան մարդկանց, բնական գոտիներին, երկրներին հնարավորինս նորմալ վիճակի վերադառնալու համար: Այնուամենայնիվ, Հիմնադրամը կարող է միջամտել միայն աղետների ժամանակ, այլ ոչ թե աղետին նախորդող փուլերում,
- 9) անդամ պետությունները և Համայնքը ջրի ու հողի օգտագործման վերաբերյալ իրենց քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնեն այն հնարավոր

ազդեցությունները, որ այն կարող է ունենալ հեղեղումների ռիսկերի և դրանց կառավարման վրա,

- 10) համայնքի ամբողջ տարածքում տեղի են ունենում տարատեսակ հեղեղումներ, ինչպիսիք գետերի հեղեղումներն են՝ հորդառատ անձրևների հետևանքով, ինչպես նաև քաղաքային հեղեղումները և ափամերձ գոտիներում ծովի հեղեղումները: Համայնքի տարբեր շրջաններում և երկրներում հեղեղումների պատճառած վնասը կարող է նույնպես տարբեր լինել: Հետևաբար, հեղեղումների ռիսկերի կառավարման նպատակները պետք է սահմանվեն հենց անդամ պետությունների կողմից և պետք է հիմնված լինեն տեղական ու տարածաշրջանային հանգամանքների վրա,
- 11) Համայնքի ներսում գտնվող որոշ նոսր բնակեցված կամ չբնակեցված, տնտեսական սահմանափակ միջոցներ և կամ էկոլոգիական արժեք ունեցող գոտիներում հեղեղումների ռիսկերը կարող են ոչ նշանակալի համարվել: Հեղեղումների ռիսկերը և հետագա այնպիսի գործողության անհրաժեշտությունը, ինչպիսին հեղեղումները մեղմելու հնարավորության գնահատումն է՝ կապված յուրաքանչյուր գետի ավազանի և ռիսկերի կառավարման ցանկացած միավորի հետ, պետք է գնահատվեն,
- 12) տեղեկատվության արդյունավետ գործիք ունենալու համար, ինչպես նաև գերակայությունների սահմանման և հեղեղումների ռիսկի կառավարմանն առնչվող հետագա տեխնիկական, ֆինանսական ու քաղաքական որոշումների համար արժեքավոր հիմքեր ստեղծելու համար անհրաժեշտ է հեղեղումների վտանգների քարտեզներ նախատեսել, որոնք կներկայացնեն հեղեղումների տարբեր սցենարների հնարավոր բացասական հետևանքները՝ ներառելով նաև շրջակա միջավայրի աղտոտման հավանական աղբյուրների մասին տեղեկատվությունը՝ որպես հեղեղումների հետևանք: Անդամ պետությունների կողմից այս համատեքստում պետք է գնահատվեն հեղեղումների ռիսկերի մեծացման պատճառ հանդիսացող գործողությունները,
- 13) համապատասխան տարածքներում հեղեղումների բացասական ազդեցությունները նվազեցնելու և դրանցից խուսափելու համար անհրաժեշտ է հեղեղումների ռիսկերի կառավարման ծրագրեր նախատեսել: Հեղեղումների պատճառները և հետևանքները Համայնքի տարբեր շրջաններում ու երկրներում տարբեր են:

Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերով հետևաբար պետք է հաշվի առնվեն այդ ռիսկերին ենթակա գոտիների առանձնահատկությունները և այդ գոտիների կարիքների ու գերակայությունների համաձայն հատուկ լուծումներ նախատեսեն՝ միևնույն ժամանակ նպաստելով Համայնքի օրենսդրությամբ սահմանված շրջակա միջավայրի պաշտպանության նպատակների իրականացմանը և ապահովելով գետի ավազանի տարածքներում դրանց համակարգումը: Մասնավորապես, անդամ պետությունները պետք է խուսափեն այլ անդամ պետություններում հեղեղումների ռիսկի էական աճին հանգեցնող միջոցներ ձեռնարկելուց կամ այդօրինակ գործողություններում ներգրավվելուց, քանի դեռ այդ միջոցառումները չեն համաձայնեցվել և երկուստեք համակարծիք որոշում չի գտնվել համապատասխան անդամ պետությունների միջև,

14) հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը պետք է կենտրոնացված լինեն այդ ռիսկերի կանխման, դրանցից պաշտպանության և դրանց հանդեպ պատրաստվածության վրա: Գետերին ավելի մեծ տարածք տրամադրելու նպատակով պետք է հնարավորության դեպքում դիտարկվեն ողողադաշտերի պահպանության և վերականգնման, ինչպես նաև մարդկային առողջությանը, շրջակա միջավայրին, մշակութային ժառանգությանն ու տնտեսական գործունեությանը սպառնացող վտանգը նվազեցնելու և կանխելու համար միջոցառումներ անցկացնելու հնարավորությունները: Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի բաղկացուցիչ տարրերը պետք է պարբերաբար վերանայվեն և անհրաժեշտության դեպքում թարմացվեն՝ հաշվի առնելով հեղեղումների դեպքերի վրա եղանակային փոփոխության հավանական ազդեցությունները,

15) հեղեղումների ռիսկի կառավարման համատեքստում շատ կարևոր է համերաշխության սկզբունքը: Այդ սկզբունքի համաձայն՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, որպեսզի ջրահոսքերի երկայնքով հեղեղումների ռիսկի կառավարմանն համար՝ ընդհանուր շահերից բխող և համատեղ որոշված միջոցառումների դեպքում նրանք փորձեն արդարացի բաշխել պարտավորությունները,

- 16) աշխատանքի կրկնօրինակումը կանխելու, ինչպես նաև սույն Հրահանգի նպատակների իրականացման և պահանջների բավարարման համար անդամ պետությունները պետք է պարտավորվեն օգտագործել հեղեղումների ռիսկի նախնական գնահատումները, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզները, հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը,
- 17) 2000/60/ԵՀ հրահանգով նախատեսված՝ գետի ավազանի կառավարման ծրագրերի և սույն Հրահանգով նախատեսված հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի մշակումը գետի ավազանի համապարփակ կառավարման տարրեր են: Երկու գործընթացի ընթացքում, հետևաբար, ընդհանուր շահերի և համատեղ արդյունավետ գործունեության համար պետք է օգտագործվեն երկկողմ հնարավորությունները՝ հաշվի առնելով 2000/60/ ԵՀ հրահանգի շրջակա միջավայրի պաշտպանության նպատակները, որը կապահովի միջոցների արդյունավետությունը և խելամիտ օգտագործումը՝ ի նկատի ունենալով, որ սույն, ինչպես նաև 2000/60/ԵՀ հրահանգով նախատեսված իրավասու մարմինները և ռիսկերի կառավարման միավորները կարող են տարբեր լինել,
- 18) անդամ պետությունների գնահատումները, քարտեզները և ծրագրերը պետք է հիմնված լինեն համապատասխան «լավագույն փորձի» և «առկա լավագույն տեխնոլոգիաների» վրա, որոնք հեղեղումների ռիսկի կառավարման ոլորտում լրացուցիչ ծախսերի չեն հանգեցնի,
- 19) մարդկային շարունակական գործունեության տեսակների համար (օրինակ՝ հեղեղումների ռիսկի կառավարում, էկոլոգիա, ներքին ծովագնացություն կամ հիդրոէներգետիկա) ջրային մարմինների բազմանպատակ օգտագործման դեպքերում, ինչպես նաև այդ ջրային մարմինների վրա օգտագործման ազդեցության դեպքերում 2000/60/ԵՀ հրահանգով նախատեսվում է պարզ և թափանցիկ գործընթաց, ինչպես նաև «լավ կարգավիճակ» կամ «ոչ-վատթարացում» նպատակներից հնարավոր շեղման դեպքերը նույն հրահանգի 4-րդ հոդվածին դասելու հստակ և թափանցիկ գործընթաց: 2000/60/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածով ծախսերի փոխհատուցում է նախատեսվում,
- 20) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/EC հրահանգի համաձայն, որը

սահմանում է Հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [7],

- 21) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է Հավելվածը գիտական և տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու իրավասություն ունենա: Քանի որ այդ միջոցառումներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ հրահանգի 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,
- 22) սույն Հրահանգով հարգվում են հիմնարար իրավունքները և պահպանվում են, մասնավորապես, Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված սկզբունքները: Այն, մասնավորապես, նպաստում է շրջակա միջավայրի բարձր մակարդակով պաշտպանությունը Համայնքի քաղաքականության ինտեգրմանը՝ համաձայն Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայի 37-րդ հոդվածով սահմանված կայուն զարգացման սկզբունքի,
- 23) քանի որ սույն Հրահանգի նպատակը, որն ուղղված է հեղեղումների վնասի ռիսկերը նվազեցնելու համար միջոցառումների համակարգի հիմնադրմանը, անդամ պետությունների կողմից չի կարող բավարար չափով իրականացվել, և քանի որ այն, գործողության ծավալի կամ ազդեցության նկատառումներով, կարելի է ավելի լավ իրականացնել Համայնքի մակարդակով, Համայնքն իրավասու է միջոցառումներ իրականացնելու՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակին հասնելու համար,
- 24) համաչափության և սուբսիդիարության սկզբունքների, այդ սկզբունքների կիրառության վերաբերյալ Պայմանագրին կցված Արձանագրության համաձայն, ինչպես նաև հաշվի առնելով անդամ պետությունների առկա հնարավորությունները՝ տեղական և տարածքային մակարդակով բավականաչափ ճկունության հնարավորություն պետք է տրվի իրավասու մարմիններին, մասնավորապես, վերջիններիս կառուցվածքի ու պարտավորությունների առումով,

25) բարելավված օրինաստեղծ գործունեության մասին միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [8]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի ու փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք, **ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.**

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Սույն Հրահանգի նպատակը հեղեղումների ռիսկերի կառավարման և գնահատման մի համակարգ ձևավորելն է, որի նպատակը Համայնքում մարդկային առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության և տնտեսական գործունեության վրա Համայնքում գրանցված հեղեղումների հետ կապված բացասական հետևանքների նվազեցումն է:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակով՝ 2000/60/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված «գետ», «գետի ավազան», «ենթաավազան», «գետի ավազանի տարածք» սահմանումներից բացի՝ կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «հեղեղում» նշանակում է սովորաբար ջրով չծածկված ցամաքի ժամանակավորապես ջրով ծածկվելու երևույթը: Այն ներառում է գետերի, լեռնային գետերի, Միջերկրածովյան ժամանակավոր ջրահոսքերի, ինչպես նաև ավամերձ գոտիներում ծովի հեղեղումները և բացառում կոյուղու համակարգի հեղեղումները.
2. «հեղեղման ռիսկ» նշանակում է հեղեղման հավանականության, ինչպես նաև մարդկային առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության և տնտեսական գործունեության վրա հեղեղման հետ կապված՝ հնարավոր բացասական հետևանքների համակցությունը:

Հոդված 3

1. Սույն Հրահանգի նպատակներով՝ անդամ պետությունները պետք է կիրառեն 2000/60/ԵՀ հրահանգի 3(1), 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված դրույթները:

2. Այնուամենայնիվ, սույն Հրահանգի իրականացման համար անդամ պետությունները կարող են՝

ա) նշանակել 2000/60/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված իրավասու մարմիններից տարբեր՝ այլ իրավասու մարմիններ.

բ) նշել որոշ ավիամերձ գոտիներ կամ առանձին գետերի ավազաններ և դրանք դասել 2000/60/ԵՀ հրահանգի 3(1) հոդվածում ներկայացված ռիսկերի կառավարման միավորներից տարբեր՝ այլ միավորների դասին:

Նման դեպքերում անդամ պետությունները, մինչ 2010 թվականի մայիսի 26-ը, Հանձնաժողով են ներկայացնում 2000/60/ԵՀ հրահանգի I հավելվածում նշված տեղեկատվությունը: Այդ նպատակով, իրավասու մարմին և գետի ավազանի տարածքներին կատարված ցանկացած հղում դիտվում է որպես սույն հոդվածում նշված իրավասու մարմիններին և ռիսկերի կառավարման միավորին կատարված հղում: Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են սույն պարբերության համաձայն տրամադրված տեղեկատվության մեջ կատարված ցանկացած փոփոխության մասին՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամիսների ընթացքում:

ԳԼՈՒԽ II

ՀԵՂԵՂՄԱՆ ՌԻՍԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հոդված 4

1. Անդամ պետությունները 3(2)(բ) հոդվածում նշված յուրաքանչյուր գետի ավազանի տարածքի կամ ռիսկերի կառավարման միավորի և կամ միջազգային գետի ավազանի՝ իրենց տարածքում գտնվող հատվածի համար, սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, պարտավորվում են հեղեղումների ռիսկի նախնական գնահատում կատարել:

2. Հիմնվելով առկա մատչելի տեղեկատվության վրա, ինչպիսիք են, մասնավորապես, հեղեղումների դեպքերի վրա եղանակային փոփոխության ազդեցությունների մասով երկարաժամկետ զարգացումների վերաբերյալ գրառումները և ուսումնասիրությունները՝ իրականացվող հեղեղումների ռիսկի նախնական գնահատումը կատարվում է հնարավոր ռիսկերի գնահատումն ապահովելու համար: Գնահատումը ներառում է առնվազն հետևյալը՝

ա) գետի ավազանի տարածքին համապատասխան մասշտաբի, տեղագրական և հողօգտագործման մասին տեղեկություններ պարունակող քարտեզներ, որոնք ներառում են գետի ավազանների սահմանները, ենթաավազանները, և եթե այդպիսիք կան՝ ափամերձ գոտիները.

բ) անցյալում տեղի ունեցած, բայց ապագայում դեռևս հավանական, մարդկային առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության, տնտեսական գործունեության վրա էական բացասական ազդեցություններ ունեցած հեղեղումների նկարագրություն, որը կներառի այդ հեղեղումների մասշտաբի, փոխադրման ուղղության մասին տվյալներ և որպես դրանց հետևանք՝ բացասական ազդեցությունների գնահատումը.

գ) անցյալում տեղի ունեցած էական նշանակություն ունեցող այնպիսի հեղեղումների նկարագրություն, որոնք կարելի է կանխատեսել, որ ապագայում ևս համանման դեպքերի պատճառով էական բացասական հետևանքներ կարող են ունենալ, ինչպես նաև պայմանավորված անդամ պետությունների հատուկ կարիքներով՝ նկարագրությունը պետք է ներառի՝

դ) մարդկային առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության և տնտեսական գործունեության վրա ապագա հեղեղումների հնարավոր բացասական հետևանքների գնահատում, որում հնարավորինս հաշվի կառնվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք տեղագրությունը, ջրահուսքերի դիրքը, դրանց հիդրոլոգիական և մորֆոլոգիական առանձնահատկություններն են, ինչպես նաև կգնահատվեն ողողադաշտերը՝ որպես ջրի բնական պահուստի գոտիներ, գոյություն ունեցող և մարդկանց կողմից պատրաստված՝ հեղեղումներից պաշտպանության ենթակառուցվածքները, բնակեցված տարածքների դիրքը, տնտեսական

գործունեության գոտիները և հեղեղումների դեպքերի վրա եղանակային փոփոխության ազդեցությունների մասով երկարաժամկետ զարգացումները:

3. Այլ անդամ պետության սահմանը կիսող միջազգային գետերի ավազանների տարածքների և 3(2)(բ) հոդվածում նշված կառավարման ենթակա միավորների դեպքում անդամ պետություններն ապահովում են համապատասխան իրավասու մարմինների միջև համապատասխան տեղեկատվության փոխանակությունը:

4. Անդամ պետությունները պետք է մինչ 2011 թվականի դեկտեմբերի 22-ը ավարտեն հեղեղումների ռիսկի նախնական գնահատումը:

Հոդված 5

1. 4-րդ հոդվածում նշված հեղեղումների ռիսկի նախնական գնահատման հիման վրա անդամ պետությունները յուրաքանչյուր գետի ավազանի տարածքի կամ 3(2)(բ) հոդվածում նշված ռիսկերի կառավարման միավորի և կամ իրենց տարածքում գտնվող միջազգային գետի ավազանի տարածքի համար որոշում են այն գոտիները, որտեղ նրանց կարծիքով կարող են հեղեղումներ պատահել, և կամ հավանական էական նշանակություն ունեցող հեղեղումների ռիսկեր լինել:

2. 1-ին պարբերությամբ նախատեսված գոտիները՝ մեկ այլ անդամ պետության սահմանը կիսող միջազգային գետի ավազանի տարածքների թվին կամ 3(2)(բ) հոդվածում նշված ռիսկերի կառավարման միավորների շարքին դասելու մասին որոշումը համապատասխան անդամ պետությունները համաձայնեցնում են միմյանց հետ:

ԳԼՈՒԽ III

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ և ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՔԱՐՏԵԶՆԵՐ

Հոդված 6

1. Անդամ պետությունները 5(1) հոդվածի համաձայն որոշված և 3(2)(բ) հոդվածում նշված գետերի ավազանի տարածքների հարթության կամ ռիսկերի կառավարման

միավորների համար ամենահամապատասխան մասշտաբի հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզներ պետք է կազմեն:

2. 5-րդ հոդվածի համաձայն որոշված և մեկ այլ անդամ պետության սահմանը կիսող գոտիների համար հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմումը նախապես համապատասխան անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակման է ենթակա:

3. Հեղեղումների վտանգի քարտեզներն ընդգրկում են աշխարհագրական այն գոտիները, որոնք կարող են հեղեղումների ենթարկվել՝ համաձայն հետևյալ սցենարների՝

ա) ցածր հավանականությամբ կամ էքստրեմալ երևույթի սցենար.

բ) միջին հավանականությամբ հեղեղումներ (հավանական կրկնման ժամանակահատվածը ≥ 100 տարի).

գ) բարձր հավանականությամբ հեղեղումներ՝ համապատասխան դեպքերում:

4. 3-րդ պարբերության մեջ նշված յուրաքանչյուր սցենարի համար ցույց են տրվում հետևյալ տարրերը՝

ա) հեղեղման մասշտաբը.

բ) ջրի խորությունը կամ մակարդակը՝ հարկ եղած դեպքում.

գ) անհրաժեշտության դեպքում՝ ջրի հոսքի արագությունը:

5. Հեղեղումների ռիսկի քարտեզները ցույց են տալիս 3-րդ պարբերության մեջ նշված սցենարների հետ կապված հավանական բացասական հետևանքները՝ արտահայտված հետևյալով՝

ա) հավանական ազդեցության ենթարկված բնակիչների ինդիկատիվ թիվ.

բ) հավանական ազդեցության ենթարկված գոտում ծավալվող տնտեսական գործունեության տեսակ.

գ) աղտոտման համապարփակ կանխարգելման և վերահսկման մասին Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգի I հավելվածում[9] նշված կառույցները, որոնք կարող են հանկարծակի աղտոտում առաջացնել հեղեղման

դեպքում և հավանական ազդեցության ենթարկվող 2000/60/ԵՀ հրահանգի IV(1)(i), (iii) և (v) հավելվածներում նշված՝ պաշտպանված գոտիները.

դ) անդամ պետության դիտարկմամբ՝ օգտակար այլ տեղեկատվություն, որի մեջ կնշվեն այն գոտիները, որտեղ կարող են տեղի ունենալ տեղաշարժվող տիղմի մեծ ծավալներով աղետաբեր հեղեղումներ, ինչպես նաև տեղեկատվություն՝ աղտոտման այլ էական աղբյուրների մասին :

6. Անդամ պետությունները կարող են որոշել, որ բավարար չափով պաշտպանված ափամերձ գոտիների համար հեղեղումների վտանգի քարտեզի կազմումը սահմանափակվի 3(ա) պարբերության մեջ նշված սցենարով:

7. Անդամ պետությունները կարող են որոշել, որ ստորգետնյա ջրերի հետևանքով տեղի ունեցած հեղեղումներից տուժած գոտիների համար հեղեղումների վտանգի քարտեզի կազմումը սահմանափակվի 3(ա) պարբերության մեջ նշված սցենարով:

8. Անդամ պետություններն ապահովում են, որ հեղեղումների վտանգի և հեղեղումների ռիսկի քարտեզներն ավարտված լինեն մինչև 2013 թվականի դեկտեմբերի 22-ը:

ԳԼՈՒԽ IV

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հոդված 7

1. Գետի ավազանի տարածքի կամ 3(2)(բ) հոդվածում նշված ռիսկի կառավարման միավորների մակարդակով համակարգված, ինչպես նաև 5(1) հոդվածի համաձայն որոշված գոտիների և 13(1)(բ) հոդվածով կարգավորվող գոտիների համար անդամ պետությունները, հիմնվելով 6-րդ հոդվածում նշված քարտեզների վրա, սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն, հիմնում են հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրեր:

2. Անդամ պետությունները, 5(1) հոդվածի համաձայն որոշված և 13(1)(բ) հոդվածով կարգավորվող գոտիների համար հեղեղումների ռիսկերի կառավարման համապատասխան նպատակներ են սահմանում՝ կենտրոնանալով մարդկային

առողջության, շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության և տնտեսական գործունեության համար հեղեղումների հավանական բացասական հետևանքների մեղմման և, հարկ եղած դեպքում, ոչ-կառուցվածքային նախաձեռնությունների և (կամ) հեղեղումների հավանականության նվազեցման վրա:

3. Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերում պետք է այնպիսի միջոցառումներ ներառվեն, որոնք անհրաժեշտ են՝ 2-րդ կետում նախանշված նպատակներին հասնելու համար, և պետք է նաև ընդգրկվեն Ա Հավելվածում թվարկված բաղադրիչները:

Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերում պետք է հաշվի առնվեն այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք ծախսերն ու շահերը, հեղեղումների ծավալներն ու տարածման երթուղիները և հեղեղման հետևանքով գոյացած ջուրը պահելու հնարավորություն ունեցող տարածքներն են, ինչպիսիք բնական ողողադաշտերը, 2000/60/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակները, հողի և ջրի կառավարումը, տարածքային պլանավորումը, հողօգտագործումը, բնության պահպանությունը, նավագնացությունը և նավահանգստի ենթակառուցվածքներն են:

Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերում պետք է արժարժվեն հեղեղման ռիսկի կառավարման բոլոր հանգամանքները՝ կենտրոնանալով կանխարգելման, պահպանության, պատրաստվածության վրա՝ ներառյալ հեղեղումների կանխատեսումներն ու վաղ զգուշացման համակարգերը, և հաշվի առնելով կոնկրետ գետի ավազանի կամ ենթաավազանների առանձնահատկությունները: Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերում կարող են նաև ներառվել կայուն հողօգտագործման գործելակերպերի խթանում, ջրի պահպանման բարելավում, ինչպես նաև որոշ տարածքների հեղեղման դեպքում՝ հեղեղման դեպքի վերահսկում:

4. Համայնքի միասնական շահերի համար որևէ անդամ պետությունում սահմանված հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերում չպետք է այնպիսի միջոցառումներ ներառվեն, որոնք իրենց ծավալով և ազդեցությամբ կարող են մեծապես ավելացնել հեղեղումների ռիսկերը այլ երկրների նույն գետավազանի կամ ենթաավազանի վերին կամ ստորին հոսանքներում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումները համակարգված են և համաձայնեցված լուծում է գտնված անդամ պետությունների միջև՝ 8-րդ հոդվածի շրջանակներում:

5. Անդամ պետությունները մինչ 2015 թվականի դեկտեմբերի 22-ը պետք է ապահովեն հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի ավարտումն ու հրապարակումը:

Հոդված 8

1. Անդամ պետություններն ամբողջությամբ իրենց տարածքում գտնվող և 3(2)(բ) հոդվածում նշված գետի ավազանի տարածքների կամ ռիսկերի կառավարման միավորների համար պետք է ապահովեն հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրի կամ ծրագրերի փաթեթի պատրաստումը, որոնք համակարգված կլինեն գետի ավազանի տարածքի մակարդակում:

2. Եթե միջազգային գետի ավազանի տարածքը կամ 3(2)(բ) հոդվածում նշված ռիսկի կառավարման միավորն ամբողջությամբ տեղակայված է Համայնքի ներսում, անդամ պետությունները պետք է ապահովեն համակարգումը՝ նպատակ ունենալով միջազգային հեղեղումների ռիսկի միասնական ծրագիր կամ հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի փաթեթ մշակելու, որը կհամակարգվի միջազգային գետի ավազանի տարածքի մակարդակով: Եթե այդօրինակ ծրագրեր մշակված չեն, անդամ պետությունները պետք է կազմեն հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրեր, որոնք կընդգրկեն միջազգային գետի ավազանի առնվազն իրենց տարածքում ընկած մասը և համակարգված կլինեն միջազգային գետի ավազանի մակարդակով:

3. Եթե միջազգային գետի ավազանի տարածքը կամ 3(2)(բ) հոդվածում նշված կառավարման միավորը տարածվում է Համայնքի սահմաններից դուրս, անդամ պետությունները պետք է ձգտեն հեղեղումների ռիսկի կառավարման միջազգային միասնական ծրագիր կամ ծրագրերի փաթեթ մշակել, որոնք համակարգված կլինեն միջազգային գետի ավազանի տարածքի մակարդակով, իսկ եթե դա հնարավոր չէ, միջազգային գետի ավազանի՝ իրենց տարածքում գտնվող հատվածի համար կիրառվում է 2-րդ պարբերությունը:

4. 2-րդ և 3-րդ պարբերությունների մեջ նշված հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը, ենթաավազանը կիսող երկրների կողմից նպատակահարմար համարվելու

դեպքում, համարվում են միջազգային ենթաավազանների մակարդակով համակարգված հեղեղումների ռիսկի ավելի մանրամասն կառավարման ծրագրերով:

5. Եթե որևէ անդամ պետություն վեր է հանում մի խնդիր, որն ազդեցություն ունի իր տարածքում գտնվող ջրերի հեղեղումների ռիսկերի կառավարման վրա, և այդ խնդիրը չի կարող լուծվել այդ անդամ պետության կողմից, ապա այն կարող է այդ խնդրի մասին զեկուցել Հանձնաժողովին կամ ցանկացած այլ համապատասխան անդամ պետության՝ խնդրի լուծման տարբերակներ առաջարկելով:

Հանձնաժողովն անդամ պետություններից ստացված ցանկացած հաշվետվության կամ առաջարկության պատասխանում է վեցամսյա ժամկետում:

ԳԼՈՒԽ V

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԹԻՎ 2000/60/ԵՀ ՀՐԱՀԱՆԳԻ ՀԵՏ, ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոդված 9

Անդամ պետությունները համապատասխան քայլեր են ձեռնարկում համակարգելու սույն Հրահանգի և 2000/60/ԵՀ Հրահանգի կիրարկումը՝ կենտրոնանալով արդյունավետության բարձրացման, տեղեկատվության փոխանակման հնարավորությունների բարելավման, ինչպես նաև 2000/60/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակները հաշվի առնելով՝ ընդհանուր շահերի և համատեղ արդյունավետ գործունեության իրականացման վրա: Մասնավորապես՝

1. սույն հրահանգի 6-րդ և 14-րդ հոդվածներում նշված հեղեղումների վտանգի և հեղեղումների ռիսկի քարտեզների մշակումն ու դրանց հետագա վերանայումները պետք է իրականացվեն այնպես, որ դրանցում պարունակվող տեղեկատվությունը համընկնի 2000/60/ԵՀ հրահանգում ներկայացված համապատասխան տեղեկատվությանը: Դրանք պետք է համակարգվեն և կարող են ընդգրկվել թիվ 2000/60/ԵՀ հրահանգով նախատեսված վերանայումների մեջ:

2. հեղեղումների ռիսկի կառավարման առաջին ծրագրերի մշակումը և դրանց հետագա վերանայումները, ինչպես նշված է սույն Հրահանգի 7-րդ և 14-րդ հոդվածներում, պետք է իրականացվեն 2000/60/ԵՀ հրահանգի 13(7) հոդվածով նախատեսված՝ գետի ավազանի կառավարման ծրագրերի հետ համակարգված կարգով, ինչպես նաև կարող են ընդգրկվել դրանցում.
3. սույն Հրահանգի 10-րդ հոդվածով նախատեսված՝ բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվումը, համապատասխանաբար, պետք է համաձայնեցվի 2000/60/ԵՀ հրահանգի 14-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավման կարգի հետ:

Հոդված 10

1. Համայնքում կիրառելի օրենսդրությանը համապատասխան՝անդամ պետությունները պետք է հանրությանը հասանելի դարձնեն հեղեղումների ռիսկի նախնական գնահատումը, հեղեղումների վտանգի քարտեզները, հեղեղումների ռիսկի քարտեզները և հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը:
2. Անդամ պետությունները պետք է խրախուսեն IV գլխում նշված հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի մշակման, վերանայման և թարմացման գործընթացներում շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը:

ԳԼՈՒԽ VI

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Հոդված 11

1. 12(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովը կարող է տեխնիկական ձևաչափեր ընդունել՝ տվյալների մշակման և Հանձնաժողովին փոխանցելու համար՝ ներառյալ վիճակագրական ու քարտեզագրական տվյալները: Տեխնիկական ձևաչափերը պետք է համապատասխանաբար 4(4), 6(8) և 7(5) հոդվածներում նշված ժամկետներից առնվազն երկու տարի առաջ ընդունվեն՝ հաշվի

առնելով գոյություն ունեցող չափորոշիչները, ինչպես նաև Համայնքի համապատասխան օրենքների շրջանակներում մշակված ձևաչափերը:

2. Հանձնաժողովը, հաշվի առնելով վերանայման և թարմացման ժամկետները, կարող է Հավելվածը հարմարեցնել գիտական ու տեխնիկական առաջընթացին:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այս միջոցները պետք է ընդունվեն 12(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է 2000/60/ԵՀ հրահանգի 21-րդ հոդվածի համաձայն հիմնադրված կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

ԳԼՈՒԽ VII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հոդված 13

1. Անդամ պետությունները կարող են որոշել 4-րդ հոդվածում նշված հեղեղումների ռիսկի նախնական գնահատում չանցկացնել այն գետի ավազանների, ենթաավազանների կամ մերձափնյա գոտիների համար, որտեղ նրանք՝

ա) արդեն կատարել են ռիսկերի գնահատում, որպեսզի մինչև 2010 թվականի դեկտեմբերի 22-ը եզրակացության հանգեն՝ արդյոք առկա է էական հեղեղում տեղի ունենալու հավանականություն կամ վտանգ, որի պատճառով տվյալ տարածքը դասվում է 5(1) հոդվածում նշվածների շարքին, կամ

բ) որոշել են մինչև 2010 թվականի դեկտեմբերի 22-ը պատրաստել հեղեղումների վտանգի և հեղեղումների ռիսկի քարտեզներ, ինչպես նաև մշակել հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրեր՝ սույն Հրահանգի համապատասխան դրույթների համաձայն:

2. Անդամ պետությունները կարող են որոշել օգտվել մինչև 2010 թվականի դեկտեմբերի 22-ը ավարտին հասցված հեղեղումների վտանգի և հեղեղումների ռիսկի քարտեզներից, եթե այդ քարտեզներն ապահովում են 6-րդ հոդվածի պահանջներին համարժեք տեղեկատվություն:

3. Անդամ պետությունները կարող են որոշել օգտվել մինչև 2010 թվականի դեկտեմբերի 22-ը ավարտին հասցված հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերից, եթե այդ ծրագրերի բովանդակությունը համարժեք է 7-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները կիրառվում են՝ չհակասելով 14-րդ հոդվածին:

ԳԼՈՒԽ VIII

ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14

1. Հեղեղումների ռիսկի նախնական գնահատումը կամ 13(1) հոդվածում նշված գնահատումն ու որոշումները պետք է վերանայվեն և անհրաժեշտության դեպքում թարմացվեն՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 22-ը և հետագայում՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

2. Հեղեղումների վտանգի քարտեզները և հեղեղումների ռիսկի քարտեզները պետք է վերանայվեն և անհրաժեշտության դեպքում թարմացվեն՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 22-ը և հետագայում՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

3. Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագիրը (ծրագրերը), այդ թվում նաև՝ Հավելվածի Բ հատվածում սահմանված բաղադրիչները պետք է վերանայվեն և անհրաժեշտության դեպքում թարմացվեն՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 22-ը և հետագայում՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:

4. Եղանակային փոփոխության հավանական ազդեցությունը հեղեղումների առաջացման վրա պետք է հաշվի առնվի 1-ին և 3-րդ պարբերությունների մեջ նշված վերանայումներում:

Հոդված 15

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է ներկայացնեն 4-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներում նշված հեղեղումների ռիսկի նախնական գնահատումը, հեղեղումների վտանգի քարտեզները և հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերը, ինչպես նաև դրանց վերանայումն ու համապատասխան դեպքերում՝ դրանց թարմացումները համապատասխանաբար 4(4), 6(8), 7(5) և 14 հոդվածներում նշված ժամկետներից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է տեղեկացնեն 13(1), 2-րդ և 3-րդ հոդվածների համաձայն իրենց կողմից կայացրած որոշումների մասին, և համապատասխան տեղեկատվություն տրամադրեն մինչև, համապատասխանաբար, 4(4), 6(8) և 7(5) հոդվածներում նշված ժամկետները:

Հոդված 16

Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 22-ը և դրանից հետո յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ՝ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ սույն Հրահանգի իրականացման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում: Նշված հաշվետվության կազմման ընթացքում պետք է հաշվի առնվի եղանակային փոփոխության ազդեցությունը:

Հոդված 17

1. Անդամ պետությունները, նախքան 2009 թվականի նոյեմբերի 26-ը, պետք է գործողության մեջ դնեն սույն հրահանգի հետ համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները: Նրանք դրա մասին պետք է անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ ակտերն ընդունվելիս դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 18

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 19

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2007 թվականի հոկտեմբերի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Նախագահ

Հ.-Գ. Փոթերինգ

Մ. Լորո-Անթունես

[1] ՊՏ թիվ C 195, 18.08.2006թ., էջ 37:

[2] Եվրոպական պառլամենտի 2006 թվականի հունիսի 13-ի եզրակացություն (ՊՏ C 300 E, 09.12.2006թ., էջ 123): Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 23-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 311 E, 19.12.2006թ., էջ. 10), Եվրոպական պառլամենտի 2007 թվականի ապրիլի 25-ի դիրքորոշում: Խորհրդի 2007 թվականի սեպտեմբերի 18-ի որոշում:

[3] ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1: Թիվ 2455/2001/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 331, 15.12.2001թ., էջ 1):

[4] ՊՏ թիվ L 186, 05.08.1995թ., էջ 42:

[5] ՊՏ թիվ L 297, 15.11.2001թ., էջ 7:

[6] ՊՏ թիվ L 311, 14.11.2002թ., էջ 3:

[7] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23: Թիվ 2006/51/ԵՀ որոշմամբ փոփոխված Որոշում (ՊՏ L 200, 22.7.2006թ., էջ 11):

[8] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[9] ՊՏ L 257, 16.07.1994թ., էջ 26: Կանոնակարգը՝ վերջին անգամ փոփոխված Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 166/2006 (ԵՀ) հրահանգով (ՊՏ թիվ L 33, 27.12.2005թ., էջ 1)

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրեր

1. Հեղեղումների ռիսկի կառավարման առաջին ծրագրերի բաղադրիչները՝

1. հեղեղումների ռիսկի նախնական գնահատման եզրահանգումները, ինչպես պահանջվում է II Գլխում, պատրաստվում են գետի ավազանի տարածքի կամ 3(2)(բ) հոդվածում նշված կառավարման միավորի ամփոփիչ քարտեզի ձևով, որը սահմանում է այն տարածքները որոնք նշված են 5(1) հոդվածում և հեղեղումների ռիսկի կառավարման սույն ծրագրի առարկան են.
2. հեղեղումների վտանգի քարտեզները և հեղեղումների ռիսկի քարտեզները, որոնք պատրաստվում են համաձայն III Գլխի, կամ արդեն առկա են՝ համաձայն 13-րդ հոդվածի, և այն եզրահանգումները, որոնք կարող են բխել այդ քարտեզներից.
3. հեղեղումների ռիսկերի կառավարման համապատասխան նպատակների նկարագրություն՝ 7(2) հոդվածի համաձայն սահմանված.
4. հեղեղումների ռիսկի կառավարման համապատասխան նպատակներին հասնելու համար իրականացվող միջոցառումների ու դրանց գերակայությունների ամփոփագիրը, այդ թվում՝ 7-րդ հոդվածի համաձայն իրականացվող միջոցառումները, ինչպես նաև հեղեղումների հետ կապված այն միջոցառումները, որոնք իրականացվում են Համայնքի այլ ակտերի համաձայն՝ ներառյալ «Շրջակա միջավայրի վրա պետական և մասնավոր որոշ նախագծերի ազդեցությունների գնահատման մասին»[1] և «Վտանգավոր նյութերի առկայությամբ խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին»[2] Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի 85/337/ԵՏՀ ու 1996 թվականի դեկտեմբերի 9-ի 96/82/ԵՀ հրահանգները, «Շրջակա միջավայրի վրա որոշ նախագծերի ու ծրագրերի ազդեցության գնահատման մասին»[3] Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հունիսի 27-ի 2000/60/ԵՀ հրահանգը.
5. առկայության դեպքում, անդրսահմանային գետի ավազանների կամ ենթաավազանների համար ծախսերի և արդյունքների վերլուծության համար, համապատասխան անդամ երկրների կողմից սահմանված մեթոդոլոգիայի

նկարագրությունը, որն օգտագործվում է անդրազգային ազդեցություն ունեցող միջոցառումները գնահատելիս:

II. Ծրագրի իրականացման նկարագրությունը՝

1. գերակայությունների որոշման նկարագրությունը և ծրագրի իրականացման արդյունքում առաջընթացի դիտանցման ձևը.
2. հանրային տեղեկատվության և խորհրդատվական միջոցառումների/իրականացված գործողությունների ամփոփագիրը.
3. իրավասու մարմինների ցանկը և, համապատասխան դեպքում, ցանկացած միջազգային գետի ավազանի տարածքի ներսում իրականացվող համակարգման գործընթացի, ինչպես նաև թիվ 2000/60/ԵՀ հրահանգի հետ համակարգման գործընթացի նկարագրությունը:

Բ. Հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրերի հետագա թարմացման բաղադրիչները՝

1. հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրի նախորդ տարբերակի հրապարակումից հետո կատարված ցանկացած փոփոխությունները կամ թարմացումները՝ ներառյալ 14-րդ հոդվածին համապատասխան իրականացված վերանայումների ամփոփագիրը.
2. 7(2) հոդվածում նշված նպատակներին հասնելու համար իրականացված առաջընթացի գնահատումը.
3. հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրի նախորդ տարբերակում նախատեսված ցանկացած միջոցառման նկարագրությունը և բացատրությունը, որոնք պլանավորվել, սակայն չեն իրականացվել.
4. հեղեղումների ռիսկի կառավարման ծրագրի հրատարակման նախորդ տարբերակից հետո ցանկացած այլ լրացուցիչ միջոցառման նկարագրությունը:

[1] ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2003/35/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 156, 25.06.2003թ., էջ 17):

[2] ՊՏ L 10, 14.01.1997թ., էջ 13:Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2003/105/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 345, 31.12.2003թ., էջ 97):

[3] ՊՏ թիվ L 197, 21.07.2001թ., էջ 30: